առ մեզ՝ թէ ի գիշերս ունին խորհուրդ պսակելոյ։ Եւ նախագոյն պատուիրեալ էր Գ. եկեղեցոյ քահանայից վասն նոցա և ոչ ոք էր կարող առնել զայն. բայց չհանդուրժեալ եկաք անտի որ երեկոյացեալ էր, և ի գիշերին զերեք եկեղեցոյն զբանալիսն առ ինքն պահեաց։ Եւ լուեալ նոցա խափանեցան[1]) ի գործոյն, և յոյժ բամբասեցան և աղճատեցան պիղծքն վասն յանդգնութեան իւրեանց յաւուրս յայսոսիկ։ Եւ վասն պատճառաց իմիք ելեալ գնացաք ի Սուրբ Գէորգ։ Եւ Դշի աւուր երթան առ իմամ տաճկին, և ոչ առնէ զնոսա քէպին թէ Սեադլուխ և պատրիգ ձեր չէ արժանացուցեալ, և ես ոչ առնեմ։ Եւ եէնկիչէրիք և տաճիկ ազգայինք ոչ գնացին յանիծեալ հացկերոյթս նոցա, այլ եէնկիչէրի ոմն Ահմէտ՝ սեղեխ մանչուն՝ առեալ զձեռս աղջկան տայ ի ձեռս մանչուն չԳաբրէլի։ այն լինէր պսակ անիծից նոցա։ Եւ լվեալ զայս վարդապետն՝ ի խոր խոցէր և յայրմանէ սրտին յանուանէ անէծս նոցա արձակէր ի մէջ եկեղեցոյ հանապազ։ Եւ յաւուր տօնի Փոխման Կուսի Աստուածածնին (1400թուական.) պատարագս մատոյց և երեկոյի ժամուն ի մէջ հանդիսին բանս բարկութեան և նզովս ասաց նոցա, և ամենայն ժողովրդեանն ետ ասել զամէնն՝ եղիցի եղիցի։

Եւ ոմն Մելիտոս անուն զդուստր իւր ի փեսայէն բաժանեալ է Զ տարով. ի բազում վարդապետս մտեալ փեսայն ի դատ և ի Փիլիպպոս հոգևորտէրն՝ և ոչ էր լեալ հնար, զի և հօճէթով Տաճկաց թողուլ տվեալ էին։ Եւ յորժամ առ սայ եկին և բազումս խրատեաց, և շատ եկին ի բողոք պատճառելով չիդար գոլոյ փեսային, և բարձրանայր աղաղակն յոյժ, մինչ զի ի բռնաւորաց մեծամեծաց թուղթս աղերսանաց բերին,

1) խաբանեցան.